


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ԹՈՐՕՏՅԱՆ

Նամակ կամ սր եւ է
գրութիւն պէտք ուղղել առ
Տնօրին. ԱՐՇԱԼՈՅՍ քաղաքի
ԳԱԶԻՐԷ (Եսմակասուրի)
Թիւ.

E. TOROSSIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHAËOLOGICE
LE CAIRE (EGYPTE)
Boite Postale No.



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱՐ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏ ՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դրոշմ	60
Վեցամսեայ	35
ՕՍՍ.Ս. ԵՐԿՐՈՐԷՆԻ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆՈՒԿ
ԵՒ ԹՂԹԱՌԱՐԻ ԺԱԽՔՔ
ԽՈՐԱԳՐՈՒՄԵԱՆ ՎՐԱՅ Է:

ԽՈՐԱԳՐՈՒՄԵԱՆ ՈՂՈՂՈՒՄԸ
ԳՐՈՒՄԵԱՆ ԵՍ ԶՆԵՆ ՏՐՈՒՐ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ
ԿԱՆԻՔԻ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Պատիւ ունինք յայտարարելու որ ըստ
որոշման Ընկերութեանն Օգոստ. 27 ԲՂ. Ե.
րեկոյնի տեղի ունեցած Խառն ժողովոյն,
յետ այսու նախորդ Գործ. Ժողովոյ այն
ամեն գրութիւնները, որոնք Մայր-Գիւմարի
կնիքն ու ստորագրութիւնները չ'են կրեր,
պէտք է անվաւեր նկատուին ց'նոր սը-
նորինութիւն:

Ի դիմաց Մայր-Գիւմարի Լսարան-
Ընթերցատուն Ընկերութեան.

Ա. Ատենադպիր Ա. Ատենապետ.
Ե. ԲԷՐԷՍՍԵՆՆԱՆ. Ա. ՊԱԼԵԱՆ.
27 Օգոստ. 1900 (Կնիք)

Գահիրէ:

ԳԱՆՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՅՈՒՄԸ

Գալստեան վարժարանի արձակուրդը
կ'աւարտին և վերաբացումը տեղի կ'ունե-
նայ յառաջիկայ երկուշաբթի, 3 սեպտեմ-
բեր:

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
Գալստեան Վարժարանի

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Ա.

ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ ԻՐԱՆՈՒՆՔԸ

Ամեն անհատ հասարակական ունի այդ
իրաւունքը: Ամեն ձեռնարկ, ամեն գրու-
թիւն որ հանրութեան կը շփուի մօտէն կամ
հեռուէն, ինքնին նիւթ մ'է քննադատելի:
Փորձաքարն է, զտարանն է սա այն ամեն
բանի, որ հանրութեան կը վերաբերի:

Բազմադիմի են քննադատութեան մա-
տուցած ծառայութիւնները: Նա պիտի
լուսաւորէ գործիչը կամ գրողը իր թի-
րութեանց վրայ, նա պիտի զգուշացնէ
ուրիշները չ'իյնալու նոյն թերութեանց
մէջ:

Ժողովուրդին այն դասակարգը՝ որ
խորհելու, տրամաբանելու սովորութիւնը
չ'ունի՝ շատ անգամ կը ձաղկէ առաքինու-
թիւնը և կը ծափահարէ մոլորութիւնը. կը
հալածէ բարին և կը փարի չարին. կը
մերժէ գեղեցիկը և կ'ընդգրկէ սոգեղը. կը
արտաքսէ ճշմարիտը և կը հիւրընկալէ սու-
տը, կեղծը:

Այն ամեն քննադատը պիտի դիմէ իր
գրչին կարգաւորելու համար ուսմին և
տոհմիկին խանդն ու աւիւնը, ատելութիւնն
ու արհամարհանքը: Կան պարագայներ,
ուր քննադատը պարտականութեամբ՝ պի-
տի կանխէ յիշեալ դասակարգին համակ-
րական ու հակակրական ցոյցը, անոր առ-
ջև պարզելով այն օգտաշատ կամ ֆրաստ-
բեր ուղղութիւններն ու գաղաբարները,
զոր գործիչն ու գրագէտը քողարկեալ կը
ձգեն յաճախ:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԱՂԱՔԱՐ: Ահա
այն միակ օժանդակները՝ ազգի մը բարո-
յապէս և նիւթապէս անկումին կամ կանգ-
նումին, վերջնականապէս մահուան, կամ
փառաւորապէս վերակենդանացման, և՛ հե-
տեւաբար՝ քննադատելու ամենակարեւոր
նիւթեր:

Բայց որպէսզի թէ՛ հանրութիւնը և
թէ՛ գրողն ու գործողը օգտուին քննադա-
տութենէ մը, քննադատը ոչ միայն լա-
ւմբունած ըլլալու է հեղինակին գաղաբարը
գործիչին ուղղութիւնը, և մի առ մի ցոյց
տալու է գնահատուած կամ պարտաւում
մասերը, այլ նաև միշտ սիրով և փութով
պատասխանելու է այն լուսաբանութեանց,
որոնք կրնան պահանջուիլ իրմէն:

Այս պայմաններուն տակ եղած քննա-
դատութիւն մը միշտ յարգելի է, և՛ իբր
ակներև ապացոյց իր բարեմտութեան
պատուաբեր զայն ընողին: (1)

Երբէք չ'մոռնանք որ « գաղաբարաց
բաղնիւնէն լոյս կը ժայթքի »:

Երկու խօսք ևս, զոր կ'ուղղենք...
բարեկամի մը:

Գիտցի՛ր, Արամ, որ բաւական տար-
բերութիւն կայ գործելու կամ գրելու և
դատելու մէջ: Այլ է կազմակերպել, յօրի-
նել, այլ է մեծ կամ փոքր և կամ բոլոր-
ովին երեակայական թերութիւններ պը-
պտել և զայն գտնելու տեսլով մրկիլ:

Այն անձը որ լաւ կը քննադատէ յա-
ճախ, անկարող է լաւագոյնը և նոյն իսկ
համարժէքն ընելու:

Կան նաև քննադատներ, որոց աչքէն
կը վրիպին բուն իսկ իրենց թերութիւն-
ները, և ի ձայն փողոյ և թմբկի կը հրա-

(1) Կգգանք թէ հոս պէտք էր լուրջ
քննադատութեան սահման մը գծել ըստ մեր
ըմբռնումին. բայց՝ հնազանդելով փափկա-
նկատութեան կանոնին՝ աւելի պատշաճ դա-
տեցինք զայդ յետաձգել, սպասելով որ
մեզի առիթ մը ներկայանայ քննադատե-
լու:

պարակին ուրիշներունը, զանոնք կարծելով
իրենց փառաց մրցակից: Եւ սրովհետեւ
անկարելի է ամեն կերպով կատարեալ գործ
մը կազմակերպել, կամ գրքոյ մը յօրի-
նել, այնպիսիներուն լեզուն և գրիչը միշտ
չարժուն վիճակի մէջ են:

Արգահատելի հոգեկան վիճակ...
Վհատելու, մէկ կողմ քաշուելու է ու-
րեմն: Այո՛, եթէ փառք ստանալու համար
կը գործես, կը գրես: Ո՛չ, եթէ միակ նը-
պատակդ է քու նմանեացը ծառայել, կըր-
նաս ապահովապէս գիտնալ ոչ քու այդ
չարչրկուած, քաշքշուած գործէդ կամ գը-
րութեանդ փոքր ի շտտէ օգտուող անհատ
մը չ'գտնուեցաւ: Կրնաս հաստատապէս ը-
սել թէ նոյն իսկ այն անպէտ, անիմաստ
քննադատութենէն դու կամ ուրիշ մը չ'սոր-
վեցաք նոր բառ մը, ոճ մը, գարձուած մը,
գաղաբար մը, որ՝ բանագողութեամբ կամ
ամբողջովին չ'մեռած բարոյական զգացման
զօրութեամբ գրչին կամ լեզուին ծայրէն
կը կաթկթի երեւնն:

Սոյն գունակ պարագաներուն մէջ գոր-
ծիչն ու գրողը՝ փոխանակ վշտանալու՝ աւե-
լի մարդասիրական գործ մ'ըրած կ'ըլլան
քննադատելու այդ մարմալը վերագրելով
ո՛չ թէ չարակամութեան, այլ մարդ-
կութեան յարակից և մանաւանդ փոքրոգի-
ներու յատուկ տկարութեան մը, անմահ
ԵՍ ի զգացումին:

Ինչ որ ալ ըլլայ, քննադատելու իրա-
ւունքը չ'կրնար զլացուիլ ոչ մի անհատի,
բաւական է որ այս վերջինը փաստերով ա-
պացուցանէ իր գիտողութեանց օրինաւորու-
թիւնը, որպէսզի արժանի ըլլայ հանրու-
թեան և մասնաւորապէս գործիչին կամ գը-
րողին շնորհակալեաց:

ԻՏԱԼԱՅԻ

ԱՐՔԱՅԱՍՊԱՆՆԵՐԸ

Իտալիոյ թագաւորին սպաննիչը իր նա-
խորդներուն նման, իր ոճին վրայ կը խօսի հը-
պարտ խանդավառութեամբ մը, կ'ըսէ թէ՛ ինք
միայնակ կատարած է այդ ոճիւրը և զայն գոր-
ծելէ առաջ ալ, լաւ մը խորհած եւ հաստատա-
պէս՝ իր միտքը գրած է սպաննել իտալական
միապետութեան ներկայացուցիչը: Բացէ ի բաց
կը խոստովանի եղեր թէ՛ ինք յեզափոխական-
անիշխանական մ'է:

Բարեզգի անիշխանականները Պրէսսիի ա-
նունը մինչեւ իսկ լսած չ'են, անոր եկած քա-

դաքին, Բաթերընի մէջ, թղթակիցներ ունեւորում հանդերձ: Մեծակեաց մը կը համարին զայն եւ հաւատք չ'են ընծայեր կարծեցեալ գաւազնուկեան տեսարաններուն, որոց վրայ հեռագիրները կը խօսին: Ասոնց անկեղծութեանը վրայ կտակածելու հարկ չ'կայ. որովհետեւ վրէժխնդրութիւնէ վախճալու բան մը չ'ունին, եթէ յայտարարեն նոյն իսկ թէ՛ զայն կը ճանչնան:

Երեք Արքայապաններ զարկած են եւ կամ փորձած են սպաննել Ուսպէրթօ թագաւորը. Բասանյանի մէջ, Աչարիթօ եւ Պրէստի. երեքն ալ անհատականութեան միեւնոյն օրինակներն են. խենդեր՝ որոնք յուսահատութիւնէ եւ անհուն պարծանքէ մը մղուած գործեցին ոճիւրը: Երեքն ալ ոչ թէ գաւազնիներ են. այլ շատ սնապարծ միայնակեացներ, որոնք չ'են ուզեր իրենց ըստպատճառ փառքէն ուրիշին բաժին հանել:

Մասին կարողութեան տեսակէտով ասոնց ամենէն կարեւորը Բասանյանի մէջ է:

1879 ին թագաւորը Նաբոլիի մէջ կատրով կը պատէր, թագուհին եւ նախարարապետ Պէնէտթօ Գալլիբի հետ, երբ Բասանյանի մէջ անուն խոճարար մը, վազրով մը զինուած, թագաւորական կատրին պատուանդանին վրայ ցատկեց եւ փորձեց թագաւորը գործնել: Պ. Գալլիբի իր մարմինը վառան ընելով պատապարեց իր վեհապետը եւ խիստ ծանր վէճեր ստացաւ որոնք բարեբաղդարար մահացու չ'եղան:

Բասանյանի թմբակներէն քննուելով խելագարութեան նշաններ ցցուց, արդէն իր ընտանիքին մէջ երեք խելագարներ կը գտնուին եղբր: Բասանյանի ց' կեանս ամբողջ կեանքը աշխատութեան գաղափարներու վրայ է:

Շատ տարիներ անցուց Բօրթօ-Վանկօնէի թիարանը. ապա իրեն ներում շնորհուեցաւ եւ թոյլտրուեցաւ Թօքանայի մէջ յիմարանոց մը փոխադրուելու. մինչեւ հիմա հոն է: Անկախութենէն իր ընթացքը շարունակած է եւ այսօր դիտութեան եւ զգուանքի առարկայ մըն է: Գաղտնիքի ոճիւրը խաղաղական ոտնակաշտութիւնը ստիպեց կրկնապատկել հսկողութիւնը: Իտալացի անխնայակները յայտարարած էր թէ իր ստաջին գիտաւորութիւնը շղթած է Ուսպէրթօ թագաւորը սպաննել:

Գրեթէ թագաւորէն հրաման ստած էր որ իր քովը քաջ եւ հուժկու ոտակաւ յիսնապետ մը միշտ հսկէ. ոճիւրն ստանալ ո՛ր էր այս արթուն պահակը. հարկաւ մարդասպանները առաջնորդող չար սգին զայն հեռացուցած էր անկեղծ խորհրդէր. այն բազմաթիւ գուզող խորհրդաներուն վրայ: Երբ Գաղտնիքի մը. Ռամեստի մը. Վէնանի մը կամ Պրէստի մը իրենց արխնարբու գիտաւորութիւնները գործադրել կ'ուզեն:

Երկրորդ փորձը եղաւ 1897 Ապրիլ 22 ին: Ուսպէրթօ իր վերջին օրերուն մէջ յազմած Գաբրիէլի ձեռքաւ ին կ'երթար եւ իրեն կ'ընկերանար իր ստաջին թիկնապահը:

Արքիա Նուովայի պողոտայէն անցած տանը «ճիշտ ժամը 14 ր երեք քառորդ անցած» կ'ընէ գաղափարութեան թուղթը (այսինքն 3 ին քառորդ անցած) Բօնիթօ-Վանկօի մօտ մարդ մը ճերմակ լաթի մը մէջ փաթեւած գաղտնի ձեռքին վրան յարձակեցաւ:

Ուսպէրթօ մարդասպանին գլխաւորութիւնը գուշակեց եւ ինքզինքը կառքին ձախ կողմը նետուելով, աջ բազուկով ուժգնութեամբ մէկդի ըրաւ. մարդասպանին ձեռքը եւ հարուածը վրիպեցուց:

Ինքն իսկ վերջը զուարթօրէն այդ փորձին պատմութիւնը ըրած է, որուն ամենախորքը մանրամասնութիւնները աչքէն վրիպած չ'էին:

«Սան ձիովանիի գուռէն երկու քիլօմէթը հեռու ճամբուն աջ կողմը տեսայ բաւական խեղճով հագուած մարդ մը, գործաւորի կապոյտ պլուզով, առանց զլլարկի եւ փողկապի՝ պատուած շապիկով մը: Մարդը ոտքի վրայ կեցած էր քիչ մը անհանգիստ եւ խոտով զիւրքով: Մըտազբաղօրէն իրեն նայեցայ, երբոր յանկարծ մարդը դէպի կառք ցատկեց եւ իմ ուղղութեանս երկարեց իր աջ ձեռքը, որ գունաւոր թաշկինակով մը պատած էր. ակնթարթի մը մէջ զանակին սուր բերանին փայլիլը տեսայ»:

«Մեքենարար մէկ կողմ նետուեցայ հարուածէն վրիպելու համար եւ միեւնոյն ժամանակ ընազգումս աջ ձեռքս բռնած բարակ գաւազանս մարդասպանին ձեռքին վրայ զարնուեցաւ: Դաշոյնին ծայրը կառքին բարձեւուն մէջ միտուած էր, բայց իմ գաւազանի հարուածս գաշոյնը կառքէն դուրս նետեց: Մարդասպանը ծընեցաւ գաշն անտելու համար, եւ արդէն ձեռքին մէջ բռնած էր, երբ երկու ձեռքով ոտակաւներ որք կառքին ետեւէն կուգային, սրացան մարդասպանին վրայ եւ այդպէսով արգիւեցին որ ինձի երկրորդ հարուած մը տայ»:

«Այն ատեն շատ որոշապէս տեսայ որ ոճիւրը իր գանակը ցանկին անդի կողմը գաշոյն մէջ նետեց»: Այս է բոլորը, աւելցուցած է թագաւորը, կը տեսնէք որ մեծ բան մը չ'է:

(Շարունակելի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անդրապատ: Տեղի թեղիքաւ թերթին թղթակիցը հետեւեալը կը գրէ Պօէր զօրափայլ ալ Ուէթի վրայ. «Իարձեալ ալ Ուէթի լուսնը երբ կ'ելլէ՛ լուսաւոր նշանները կ'երևին մեզ ընելու համար»: «Աղէկ հասկըցէ՛ք ալ Ուէթը Վրէտ է եւ Նիւթէսի կը մօտենայ»: Երբ արեւը կը ծագի, արեւագիւրը (հիլիոթրալ) մեզ կը կանչէ՛ «զգոյշ կեցէ՛ք, որովհետեւ ալ Ուէթ Բէթլէ՛հէմ է եւ կրնայ փորձել Լէտիսիթ ձգուած երկու գաղափար զօրքերը դերեվարել»:

Երբ իրիկուն ըլլայ, գիշերապահ զինուորները արեւեւքէն վազելով կը համին եւ գրօշանիշները մեզ այսպէս լուրեր կը բերեն. «ալ Ուէթ Գլանտիքլին քի կ'ընծը անցաւ 7 Կօմանտօներով եւ Տրիսիի վրայ կը քալէ Տէրթիլ զօրավարը Վալիսիլու համար»:

Եւ ստիպին Ռընուլ, Հընթըր եւ Մէթուըն զայն կը հալածեն. երեք ամսոյ շտի Ռընուլիչ հոգին հանեց. մինակ իրեն համար 30000 հոգի նախապէս սահմանադրուելը կ'սպասէին. քանի՛ քանի անգամներ հալորդակցութեան պիտեւուն վրայ նետուեցաւ եւ ամի մը մարդով անդրապատները շնչասպառ ըրաւ. ամբողջ Եօմէնիի գումարտակ մը, Միլիցիաի գումարտակ մը գերեվարեց եւ իր ամբողջ բանակին բաւելիք ձեռուան հագուած ձեռք ձգեց, որոնք անդրապատ զօրքերու համար էին. անշուշտ պատերազմի պատիւը եւ փառքը մեղի չ'է:

«Պատիւ եւ փառք անոր, որ արժանի է» եթէ գտնուի անդրապատի հեծելազորակազմի ըստպայ մը որ ալ Ուէթի գանուած պարագաներուն մէջ՝ կարենայ գերի բռնել 1000 հոգի որուն 500 ը ձեռուր ըլլայ, կտրել հաղորդակցութեան գիծերը եւ յաղթել զօրավար Օլտ Հարրիի, որուն ուժը 80000 հոգի է, այնատեն պիտի խօսիմ անոր համար միեւնոյն գումարտական խօսքերով:

Ապագային այն զինուորները եւ սպայները որք զինուորական ուսումը պիտի սորվին, պիտի ցաւին որ Պօէրներու մէջ Թօմինի մը չ'գտնուիր ալ Ուէթի ռազմագիտութիւնը նկարագրելու համար. որովհետեւ իր ըրած զինուորական գործողութիւններն են որ ամեն հեծելազորակազմի Բրօքսէտօր օտար զինուորական դպրոցներու մէջ կը սորվեցնէ:

Ինչ որ ալ ըլլայ ալ Ուէթի վերջը, իր անունը ապագայ սերունդներու պիտի անցնի եւ պիտի յիշուի իբր տաղանգաւոր մեծ զօրավար մը՝ հայրուկային կռիւներու մէջ:

Քլիօնի ՄԱՀԸ — Թուլանի երկրորդ լաճանման Երեսփոխանը Քլիւզէ, մեռաւ: Գօմիւնի նախորդ զօրավարը կուրծքի արեան խուժումէ մեռաւ. ծնած էր Բարիզ 1823 յունիս 13 ին:

Երկար տարիներ ֆրանսական լանակին մէջ ծառայած էր, ուրկից իր հրաժարականը տուած էր, 1860 ին Սիկիլիոյ պատերազմին ժամանակ Իտալական բանակին մէջ ծառայելու համար: 1866 ին Ամերիկայի թաղաքային պատերազմին մասնակցեցաւ, ուր զօրավար անունուեցաւ:

Գրեւորէ կ'ընդամ մահուան գաղափարներու մէջ մը անգլիոյ մէջ Ֆենեաներու (Իրլանտացի) յեղափոխութեան մասնակցելուն համար. երկրորդ ֆրանսայի մէջ իբր Գօմիւնի անդամ ցըցուցած գործունէութեանը համար:

1877 ին պատերազմեցաւ ընդդէմ Թուրքիոյ. 1886 ին ներում շնորհուեցաւ եւ եկաւ Բարիզ. 1888 էն ի վեր Թուլանի Երեսփոխան էր:

Մշակ հետեւեալ տեղեկութիւնները կուտայ:

«Սուլթանը իրատէ մը հրատարակեց, որով թույլ կուտայ թուրքոյ նեղուցէն անցնել, Չինաստան զօրքեր փոխադրող բոլոր Ռուսական նաւերուն»:

«Իրանագիտական մարմինը, ընդհանուր առմամբ կը գովէ, կ'ընէ Մշակ, Սուլթանին այդ որոշումը որ սակայն նախագէտ պէտք չ'է համարուի սպագայի համար»:

—Հետեւեալ կը հաստատուի այն լուրը թէ՛ Վիլհէլմ կայսրը հեռագրած է Սուլթանին, խնդրելով որ վերջնականապէս վերջուր Պօլիսէն Պաղատա շինուելիք երկաթուղւոյն հարցը:

ԱԼԻ ՓԱՇԱՅԻ ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹԻՒՆԸ —

Սուլթանը իմանալով օտար լրագրաց մէջ հրատարակուած տեղեկագիրները Սասունի նոր շարդի մասին, իր բացաճակ հակակրօթիւնը յայտնած է այս եղելութեանց մասին եւ պաշտօնանկ ըրած է Պիթիսի զինուորական հրամանատար Ալի փաշան եւ հրամայած է որ շատ խիստ (°) եւ մանրամասն քննութիւն կատարուի այնպէս որ կարելի ըլլայ արդարութիւնը երևան բերել:

Սուլթանին այսպիսի ձեւակերպութիւններու վրայ հիմնուած խաղերը՝ ալ բոլորովին զրկուած են ո՛ր է արժէք ունենալէ:

Եթէ կարգը մերն է, խորհուրդ կ'ուտանք Սուլթանին, որ աւելորդ յոգնութիւններ յանձն չ'առնէ արդարաբխը երեսակ բերելու համար. քննութիւններ բանալու: Մեզ եւ մեզի հետ բոլոր աշխարհի ծանօթ է որ առանց Սուլթանի ուղղակի կամ անուղղակի հրամանին, իրեն հպատակներուն ո՛ր է քննա հասնելը կարելի չ'է:

Հարկ կայ որ ակներեւ եւ հաստատուած ճշմարտութիւններու վրայ տակաւին կասկած յայտնելու չափ տկարամիտ գանուի մարդ էակը եւ դեռ խաբուի՛ . . .

ԱԼԱՐՏԱՅԻ

ԿԵՆԱՎՈՒԿԱՆ ՅՈՒՇԵՐ

S. Z. P. ՍԱԽԱԼԱՆ

Սոյն հետաքրքրական գրքոյքը՝ մաքուր տպագրութեամբ ու ալեգարգ հեղինակին կենդանագիր պատկերովը՝ կը ծախուի 8. 4. Երբեկացեանի խանութը ի Շարա Ապտիւլ Ալիզ եւ կամ 8. 4. Նաւասարդեանի քով:

Գինն է 5 դահեկան ողջ եգիպտական Վճարմունք կանխիկ:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— 0 —

Ն. Բ. ԽՏԻՎԸ. — Առաջիկայ երկու- շարթի Ռաս-Էլ-Ֆինի պալատին մէջ ընդու- նեւութիւններ պիտի կատարէ :

Ն. Բ. ԽՏԻՎԸՆԻՆ ալցելուներ չի պի- տի ընդունի :

Այսօր ժողովոյ Օձխիտի մէջ պիտի նշանակուի Ն. Բ. ԽՏԻՎԸՆԻ կատարելիք ըն- գունեւութեան գաւառորութիւնը :

— Ն. Վ. Վ. Բրէնս և Բրէնսէն Իպրա- ճիմ փաշա Հելմի իրենց զաւակաց հետ Քար- լսպատ կը գտնուին այս պահուս :

— Արապի փաշայի անդամակալ զաւակը, Իպրաճիմ էֆ. Արապի Երկու ամիսէ ի վեր Գահիրէ հասած է և կը բնակի Նասրիէն, իր մօրը քով :

Տեղական թերթ մը կ'ըսէ թէ Արապի փաշայի որդին արարերէն բառ մը իսկ չի գիտեր և միայն անգղիերէն կը խօսի. ընդ- հակառակը Իպրաճիմ էֆէնտին, իր մայրե- նի լեզուն կը խօսի բուն իսկ տեղացիի մը պէս :

Արապի փաշա երկու զուակ ունի. Իպ- րաճիմ և Հասան էֆէնտի, այս վերջինը իր հօրը հետ աքորալայր գնացած է' :

Իպրաճիմ էֆ. կ'ըսէ թէ իւր հօրը ա- ռաջարկուած է, Ն. Բ. ԽՏԻՎԸՆԻ չնորհ խնդ- րել, բայց Արապի փաշան մերժած է ա- ռարկելով թէ՛ Եգիպտոս վերադառնալու պահուն չի պիտի կրնայ հանդուրժել իւր հայրենակցաց կողմէ իրեն ուղղուած քննա- գատութեանց :

Օմտուրմանի ոստիկանական սպաներէն Մուհամմէտ Սատրը, զինուորական խոչհուր- դէն 15 տարուան տաժանակիր աշխատու- թեան գատապարտուեցաւ տեղացի մը ցիցը հանելուն համար :

Այս սպան Սուտանցի երիտասարդ ծա- ռայ մը ունէր որ անյայտացած էր. կաս- կածելով որ բնիկ մը անոր փախուստին ձե- անտու գտնուած է, զայն կանչեց և ամեն տեսակ չարչարանքներու ենթարկեց խօստու- վանութիւն մը առնելու համար :

Տեսնելով որ իր ջանքերը անօգուտ են, գահիճը ցցահան ըրաւ խեղճ բնիկը, որ 24 ժամու սոսկալի չարչարանքներ քաշելէ յե- տոյ մեռաւ :

— Իտալացի մը հրացանի երեք հար- ուածով առաջի օրը վիրաւորեց իր մէկ հայ- րենակիցը՝ որ հիւանդանոց փոխադրուեցաւ :

Մեն ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ. — Տիար Կ. Նուասարգեանի մօտալուտ Ձմիւռնիա մեկ- նումը ծանուցինք : Այս մէկ երկու օրերուն մէջ ալ կը տեղեկանանք թէ՛ Պատ. Քաղաք. Ժողովն, ամենամեծ առաստանեռնութեանը, 12 անգղիական ոսկւոյ նուէր մը ըրած է 8-9 տարիներ խղճմտօրէն ծառայող պաշտօնէի մը, որ այնչա՛փ անգամներ յանդիման զըր- կանքներու ալ ենթարկուած է : Եթէ այդ ամենը չ'ըլլար իսկ՝ Քաղաք. Ժողովոյ ան- զամներուն տիրող կառավարութեան օրի- նաց բաւական հմուտ ըլլալը, իրաւունք կուտար մեզ մտածելու թէ՛ Ազգ. ուսուցչի մը միթարութիւններն են այդպիսի պա- րագաներու մէջ եղած վարձատրութիւնները և թէ՛ նուազ պիտի համարուէր նոյն իսկ, եթէ Պատ. Քաղաք. Ժողովն Տիար Նուա- սարգեանի պաշտօնավարութեան տարիներ- ըուն թուով մէկ մէկ ամսական նուէրէր ա-

նոր : Առիթն է յիշեցնել Քաղաք. Ժողո- վին թէ՛ ի՞նչ վճարելով հեռացուց ասկէ ա- ռաջ Ազգ. Առաջնորդարանի պաշտօնեալ- ներէն հաւաքել մը . . . :

Գարձեալ, կ'արժէ որ իր արձանագրու- թիւններն () աչքէ անցնէ գիտնալու համար թէ՛ ինչ նուիրած է երբեմն արդէն իր արժա- նիքէն շատ բարձր ամալթոշակով մը խը- նայուած պաշտօնէի մը համար որ քանի մը օր հիւանդացած է եղեր . . . : Է՛հ, պէտք է համբերել գիտնալու համար թէ՛ մեր թաղական աշխները, հոգաբարձու էֆէնտի- ները երբ պիտի ուզեն ճանչնալ ազգային ուսուցչութեան անասխանակալի ասպարէզին մէջ մաշուած իրենցմէ շատ բարձր և ազնիւ զգացում կրող անձերուն արժէքը :

ԿԱՐՁԵՑՆԱԼ ՄԱՀՏԻՆ. — Ըստ տեղա- կան թերթի մը, Մուհամմէտ Պէյ Մօհիւզ Մընուֆի փոխ Միւտիըր, ձերբակալուած է Սալիտ ԱՀՄէտ էլ Նէկուժի անուն մարդ մը որ ինքզինքը Մահտի հոշակած է և 1000 ի չափ կուսակիցներ ունի եղեր :

— Կը լսենք թէ՛ Լսար. — Ընթերցատուն ընկերութեան նորընտիր Գործ. Ժողովոյ կողմէն պիտի հրատարակուի քննադատա- կան իմաստասիրութիւնը Ֆրանսերէն գըր- քոյկի մը, որուն տիտղոսն է՝ կ'ըսուի՝ ԹՈՒՐ- ՔԻՍ 1876 ԷՆ Ի ՎԵՐ. գործ՝ հանրածանօթ ազգայնոյ մը և տպուած 1894 ին, այսին- քըն Սասնոյ շարդէն ետքը, և այն միջոցին՝ յորում ամբողջ Հայաստան արեան ծովի մը վերածուած էր, և մինչև Հայութեան վեր- ջին ապաստաններն եղող եկեղեցիներն իսկ հրոյ ճարակ կ'ըլլային :

Գահիրէի մէջ մինչև ց'արդ կազմուած և լուծուած 20-30 է աւելի ընկերութեանց մէջ շարունակ գտնուելով, երկար տարիներ այդ ընկերութեանց վիճակը սերտած և փորձառութիւն ստացած բարեկամ մը, այդ ընկերութիւններէն միոյն նկարագրութիւնը համառօտ և զուեշտախառն գրելով մեզ զրկած է ի հրատարակութիւն, հետեւեալ նամակով :

Մենք՝ մեր բարեկամին փափաքը պիտի ջանանք իրողործել, մեր առաջիկայ թուով իբր բանասիրական անոր հրատարակութիւ- նը սկսելով :

. . . Տնօրինութիւն Արշաղոյս Լրագրի 'ի Գահիրէ

Լսարան-Ընթերցատուն Ընկերութեան արդի խառնաչիթ վիճակը տեսնելով, ներ- կայիւս յղած եմ ձեզ նոյնանպատակ դա- դարեալ ընկերութեան մը համառօտ նկա- րագրութիւնը և կը խնդրեմ որ բարեհա- ճիք հրատարակել զայն ձեր պատուական լրագրոյն մէջ. հաստատուելու համար թէ՛ Հայերը միշտ նոր ի նորոյ Ընկերութիւններ կը կազմեն և շատ լաւ ալ օրէնքներ կը հաստատեն իրենց համար, բայց ցաւալի է ըսել որ օրէնքի հնազանդիչ չ'գիտեն. այն- պէս որ ամէն ոք իր քմահաճոյիցը գոհա- ցում միայն կը փնտռէ հանրային գործե- ըու մէջ, և այս պատճառաւ է որ միշտ չ'ենք յաջողիք :

Գահիրէ 29 Օգոստ. 1900 Բ.

ԱՁԳ

Աղքատախնամ Ընկերութեան Գործ. Ժողովն կը փութայ յայտարարել յարգոյ Հայ Հասարակութեան թէ՛ յետ այսու եկե-

ղեցույ շրջափակին մէջ ինպատու ընկերու- թեանն գտնուած պնակին տեղ, Քաղաք. Պատ. Ժողովոյ հրամանաւ պիտի շրջագայի գանձանակ մը :

Ի գիտութիւն բարեսէր Ժողովրդեան կը փութանք յայտարարել զայս :

Աղքատախնամ Ընկերութեան Գործադիր Ժողովոյ (Կնիք)

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Պէլֆաթ 28 Օգոստ. Անցեալ կիրակի Յրէնչ զօրավարը Պօէրնէրը ետ մղեց, մեր ծայրագոյն ձախակողմէն պահակներու զօ- րաբաժինը բլուր մը գրաւեց ուր հակառակ կողմէն եկող թշնամոյն կրակին ամենամեծ քաջութիւններ ցցուց ծանրակշիռ պարա- գայներու տակ : Կրակը արեւին մարը մտնե- լէն յետոյ դադարած է, Լորտ Ռօպէրթս պատերազմի դաշտը այցելած է :

Լոնտոն 28 Օգոստ. — Զօրավար տը Ու- էթ երեան ելած է Հէլլըրոնի մօտերը, Սէ- նէկալի և Պէթլէհէմի մօտերը երեք հատ փոքրիկ գօմանտօներ կան :

Նաթալի մէջ Պօէրնէրու արշաւանքնե- րը երթալով աւելի յանդուգն կ'ըլլան, ի- րենց գլխաւոր նպատակակէտը երկաթու- ղին է : Տրնտիի պահակախումբը յանկար- ծական յարձակումէ մը վախնալով պատ- նեշտուած է :

Տեղակալ Գորտուա երեկ Հրացանի բռնուեցաւ բանտին շրջափակին մէջ :

Բրէթորիա 27 Օգոստ. — Նախագահ Սթէյն միացած է Գրուէր Նախագահին :

Բրէթորիա 25 Օգոստ. — Պուլըր զօ- րավար Լինսօգլուֆի մօտ շատ դժուարու- թիւններ քաշած է : Երեկ՝ Լիվրփուլ Ռէ- ժիմէնթի, երկու գասակ սխալմամբ խոխոփ մը մէջ մտան, շուտով պաշարուեցան Պօէր- ներէն և 10 մեռեալ, 46 վիրաւորեալ ու 32 անյայտացեալ ունեցան :

Լոնտրա 30 Օգոստ. — 1000 Ռուս և 640. Գերմանացի զինուորներ Թիէն-Ձիւնէն մեկնած են դէպի Փէքին : Սկսուած է հե- ռագրական թելերու հաստատութիւնք որ պիտի միացնէ Շանկհայ-Շի-Պուի հետ :

Լոնտրա 30 Օգոստոս. — 200 հոգիէ բաղկացեալ աւազակախումբ մը արշաւանք կատարած է Գանթօնի թարթաղ քաղաքին մէջ :

Լոնտրա 30 Օգոստ. Կառավարութիւնը Հիւսիսային Ափրիկէ յատուկ մասնախումբ մը զրկեց, հոն տիրող հիւանդութեանց տեսակը ուսումնասիրելու համար :

« Արշաղոյս » ի 99 ըզ թուով հրատա- րակուած « առ քեզ սիրեցեալ բարեկամ Ա. Նազ. . . » ոտանաւորին ստորագրու- թիւնը Ս. Փ. պէտք է ըլլայ որ մոռաց- մամբ նշանակուած չ'էր նոյն թուոյն մէջ :

— Մեր ընթերցողաց և բոլոր ազգա- յիններուն ուշադրութիւնը կը հրաւիրենք չորրորդ երեսի ՍԱՍՈՒՆ ԵՒ ՁԷՑԹՈՒՆ նոր հրատարակութեան յայտարարութեանը վը- րայ :

Գ Ա Ֆ Է Ե Փ Ր Ա Տ

ԱՊՏԻՆ — ՊԱՊ — ԷԼ — ՊՕՍԹԱՆ

Պաշտօնի և նուագածուսց խելի
Զօրանցիկն ճիշտ դիմացը

ՕՂԱՆՆԷՍ ՍԻՄՈՆԵԱՆ ԵՒ
ԳԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԸՆԿ.

Պատիւ ունին ծանուցանել Արդոյ ազգայնոց թէ՛ հանդատի ժամերն ստուգարար օգ ծծելով զուարճանալու և զովարար ըմպելիներով յոգնած մտքերը կազդուրելու համար, կրնան գիտել ԵՓՐԱՏ ՍՐՃԱՐԱՆԸ, որ վերոյիշեալ Ընկերութիւնը ամենամեծ հոգածութեամբ և իննամով զարգարած և յաճախորդաց հանդիսառ ինկատի ունենալով՝ պատշաճագոյն վիճակի մը մէջ դրած է:

ԳԱՖԷ ԵՓՐԱՏ ի մէջ կը մեծարուին զովարար ըմպելաց ամենամաքուրները. ընտիր և թարմ՝ օշարակներ, անխարդախ սուրճ և անխառն կաթ:

Հոն գիտող յաճախորդք գոհ պիտի մնան, գտնելով մաքրութիւն, ճաշակաւոր սպաս և անթերի ծառայութիւն, ամենէն խստապահանջները գոհացնելու աստիճան:

ՀԱՅ ՃԱՇԱՐԱՆ

ՄԻՋՐԱՆ ԵՂՐԱՐԻ ԳԱՋԱՆՃԵԱՆ
ՇԱՐԻԱ ԱՊՈՒ — ՍՍՊԱՀ

Նեով: Լուսինքնի Դեղատանի ղեկավար

Որ և է կերակուր ակործանամ և սընդարար ըլլալու համար պէտք է, մսի, խղի, բանջարեղինաց լաւագոյն տեսակը ընտրել. այն համալմամբ որ սննդարար կերակուրը ստամոքսին կենսատուն է, ո՛վ որ ստամոքսին յարմար կերակուր չ'ընտրեր ակործակին թշնամանանք կ'ընէ:

Իրենց կենաց բարեկամ եղողներն կը հրաւերենք յաճախել մեր վերոյիշեալ ճաշարանը, վստահ ըլլալով թէ՛ գոհութեամբ պիտի մեկնին:

Գիներն ԳԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՆ:

ՀԱԽԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՆՏՐՔԷՆ Լ. ԵՂԻԱՋԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՋ

Ականաւոր և ինքնակաւոր երածիչուներու աշակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյն գնել փափաքողներն կամ բաժանորդագրուիլ ուղղուեն, կրնան գիտել՝ Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօրէնին:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՆՈՐԱԿԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՐՇԱԼՈՅՍ»

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻՆ ԱՋԻՋԻ ՍԿԻՋԻՐԸ

Օտեսնիյե դեղատանի ղեկավար փոքրցիկն վեջ:

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7 Էն մինչև երեկոյեան ժամը 8: ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին:

Այցեխարտեր, Շրջաբերականներ, Գիտեր, Հրաշխագրեր, Մահագրքներ, Տեղեկագիրներ, Կանոնագրքներ, Տոմարներ և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագոյնութիւն և չափաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ:

ԿՈՊԷՌՊԵՆԼԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ.

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՉԱՏՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած և փորձաւորութիւն ստացած է:

Պոլսոյ մէջ Ապտուլլահ եղբարց տան, ինչպէս և ուրիշ մը քանի ծանօթ տուններու, քաղաքի մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Էօզպետիյե Շարխա Գաննէյ Օթէլ, ՇէրէրՍՍԻ ճիշտ գիտաց թիւ 3 արարթըմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս և դուրսը կուսիներ ի հարկին:

Ակրանսխանն ընկան մեծութեամբ: Կենդանագիրներ ամերիկեան մեքենայով որոնք երբէք չ'են աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ ընկան գոյներով միլեւաքիւր: Իւզաներկ և յրաներկ պատկերներ և ըն:

Լուսանկարի և պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ուրքուշ, ճեպէրքըման և ըն:

Իրեն գիտող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ:

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Ց

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՍԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն և և չի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ այսարհի ուրիշ օր և է ընդունութենէ մէկ միլեար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ իրհայրէ:

ՏՕՔԹ. Ա. Յ. ՔԵՐԵՍՈՒՄԻՃԵԱՆ

Ի Շարխա Գլոյթ-Պեյ, քիւ 20

Իր ջրի խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն ուրբաթ օրերը կես օրէ առաջ ժամը (ը. ե.) 9 Էն 11 որոշած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն գիտել ուղղը աղքատ հիւանդներու:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅՅՈՒՆ

Ծերունի Տիար Ս. Ֆէլէկեանի վերոյիշեալ հեղինակութեան ՀԻՆԳԵՐՈՒՄ ֆորման ալ հրատարակուած է:

Բաժանորդագրուելու փափաքողք, ինչպէս արդէն ծանուցուած է, կրնան գիտել «Արշալոյս» ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ. ուր հեղինակը կը գտնուի կէս օրէ վերջ ժամը 5-7:

ՀՆԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 31 ՕԳՈՍՏՈՍ 1900

1694	9325	4551	3998	8525	8085
6898	6301	9691	7839	9697	5808
9486	389	9438	1035	4348	7918
5584	9575	4360	7108	9964	2765
		5766	7666	355	

ՏՕՔԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԱՐՈՅԺ

Ապսին Շարա Գուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակոսներ:

Կը գաղբեցնէ վայրկեանապէս ակոսի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակոսներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ճրի դարմանում, ամեն օր կէսօրէ ետք ժամը 3-5:

Այսարհի մէջ գտնուող ուրիշ օր և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործակատար յԱղեքսանդրիա: